

մանակն էր, երբ գործարարական շարժումը հին բնականորեն տեսակետից հրեշտակաբան էր թուլանում, ոչ մի բանի հետ չէր համապատասխանում, ոչ մի արդարացուցիչ չուներ։ Բայց այժմ այդ հարաբերությունը է հակառակը։ 17-ի մանիֆեստից յետոյ։ Գործարարական շարժումը կը լինի մի վերջ հասցրած ամբողջ վրաստանին և վախճանում ենք, որ նա հետևանքներով լի կը լինի, չը լինի թէ՛ նորից ենթարկվենք բոլոր այն սարսափներին, որոնք կապված են գործարարական շարժման հետ, մի խուլ և յամառ կուռի հետ, որի չարագուշակ նշանները մենք տեսնում ենք հարգազուրկության ուղիների խզման և զինաւորական գնացքների խորտակման մէջ։ Ռուսաց հասարակական կարծիքն ևս չէ կարող անտարբեր մնալ Գործարարական շարժման Պետական Գործարարական գումարման օրամուտին, ըստ որում այդ կարծիքը հակված է տեսնելու, ինչպէս և է իրողական, գործարարական շարժման մէջ համահունկական շարժման արտայայտութիւնները։

ՄՏԳԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ
IX

Նոր մանիֆեստով ազատութեան ժամը հընչած պէտք է համարել և Ռուսաստանի 1,200,000 հայերիս համար։

Ուրեմն, մենք, հայերս պէտք է որոշենք, թէ ինչ գիշեր և ուղղութիւն պէտք է ընենք, զէպի նոր յայտարարված սահմանադրութիւնը, մենք պէտք է պարզենք, բացորոշենք մեր քաղաքականութիւնը, մեր քաղաքական ծրագիրը։

Արդե՞ծք նոր սահմանադրութիւնը, որ ստեղծում է մեզ համար նոր կացութիւն, գործունէութեան նոր ասպարէզ, որ հիմնովին պէտք է յեղաշրջէ մեր հասարակական, ժողովրդական և ազգային կեանքը, համապատասխանում է լիովին մեր բաղձանքներին, տեսնանք, ներքին, մեր պատմական ձգտումներին, մեր pia desiderata-ներին, արդե՞ծք նա լիապէս երաշխաւորում է մեր ազգայնական, հոգեւոր-մտաւոր անկախութիւնը և ինքնուրոյնութիւնը, արդե՞ծք տալիս է նա մեզ հնարաւորութիւն անշեղ և անարգել կերպով զարգանալ, բարգաւաճել թէ՛ հոգեւոր-մտաւոր բարոյական և թէ՛ անտեսական ասպարէզներում, արդե՞ծք նա տալիս է մեզ հայերիս, իբրեւ Ռուսաստանի ընդհանուր քաղաքացիների, միջոց և հնարաւորութիւն մասնակցել մեր ընդհանուր հայրենիքի՝ Ռուսաստանի քաղաքական կեանքին և սօցիալական շարժումներին։

Եւ եթէ գտնենք, որ նա չէ կարող մեզ գոհացնել, որ նա չէ համապատասխանում մեր ազգի մեծամասնութեան բաղձանքներին, շահերին, պէտք է՝ այդ գէպում յարգենք, միանանք դժգոհ կուսակցութիւններին, որոնք թէ՛ Ռուսաստանում և թէ՛ մեզ մօտ Կովկասում յայտարարեցին, իրանց անգոհ և արամադիր՝ կուռը շարունակելու աւելին ստանալու համար, քան ինչ տուլիս է սահմանադրութիւնը։

Անա հարցեր, ամենազգլխաւոր և կենսական հարցեր, որոնք պէտք է դրանք մեր բացառիկ ուշադրութիւնը և որոնց շուրջը պէտք է պտտեն բոլոր մեր մտածումները ու հոգսերը։

Այդ հարցերի կանոնաւոր լուծումից կախված է մեր ազգի ամբողջ ապագան, բարեբաղին և նրա կեանքի կանոնաւոր ու անխափան զարգացումը։ Այդ հարցերի կանոնաւոր լուծումից է կախված լինելու և մեր ապագայ ազգային բաղաձայնութիւնը ու այն գերքը և վերաբերմունքը, որ մենք այսուհետեւ պէտք է ընենք։

Եւ թող մերով մեզ, եթէ մենք, խնդրել աւելի լաւ լուսարարելու և նրա կանոնաւոր ու ազգի մեծամասնութեան կողմից հաւանելի և ընդունելի լուծման աջակցելու համար, մի յետադարձ, քննարկելով հայեացք ձգենք մեր դէմ մօտակալ անցեալի վրա և ցոյց տանք, թէ՛ հայ ազգը Ռուսաստանում ինչ նպատակների է ձգտել, ինչ բաղձանքներ և իրաւունքներ է ունեցել և հասարակական, քաղաքական ու ազգայնական ինչ իրաւունքների իրագործման ջանքեր է արել։

Հայոց ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, որ հայ ազգը իր բնաւորութեամբ, ձգտումներով, հոգեկան և բարոյական յատկութիւններով հետամուտ է եղել միշտ խաղաղ, կուլտուրական և անտեսական նուաճումների ու բնաւ ազգայնական քաղաքականութեան չէ ձգտել։ Հայը միշտ հաւատարմութեամբ ծառայել է այն պետութեան և երկրին, որը

նրան հնարաւորութիւն է տուել զարգանալ անտեսապէս և զարգացնել իր ազգայնական մտաւոր-հոգեւոր անկախութիւնը։ Միայն երբ պարսկական և թիւրքական լուծը այնքան ծանրացաւ, որ նա այլ ևս անկարող էր կրել, երբ նա տեսաւ, որ իր ազգային գոյութիւնը վտանգի է ենթարկված, որ չը կայ նրա համար կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն մասնագական պետութիւնների տիրապետութեան ներքոյ, նա իր հոգու ամբողջ գործութեամբ ձգտեց զէպի այն քրիստոնեայ և ուրեմն գաւառակից-կողբայր ազգը ու պետութիւնը, որ կարող էր հայկազայնութիւնը նրան այդ ապահովութիւնը և խաղաղ, կուլտուրական կեանքի պայմանները։ Այդպիսի միակ հարեւան մի պետութիւն այդ ժամանակ Ռուսաստանն էր։ Այդ ձգտումն ունեցաւ և Վրաստանը, որը, թէ՛ ևս էր իր սեպհական տէրութիւնը, բայց այդ տէրութիւնը մի կողմից ժողովուրդը կեղեքելու գործում ոչնչով չէր տարբերվում պարսկականից և թիւրքականից, իսկ միւս կողմից անգոր էր մաքառել այդ երկու հզօր պետութիւնների դէմ ու պահպանել իր անկախութիւնը։

Հայերի ձգտումը զէպի Ռուսաստանը, որ սկսեց զեռ Մեծն Պետրոսի ժամանակից, իրագործվեց միայն 19-րդ դարի սկզբներին և իրանց հայերի աջակցութեամբ այժմեան Սնդր-վելով պարսկական և թիւրքական լծից։

Ազատվելով այդ անապոյտ լծից, հայերը ձեռք բերին Ռուսաստանում կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն ու լիակատար հնարաւորութիւն ստացան զարգանալ և բարգաւաճել անտեսապէս և ազգայնապէս, պահպանելով իրանց լեզուն, եկեղեցին և գաղութը, որոնց հայը իր պատմական ամբողջ կեանքի ընթացքում միշտ յարած է եղել, համարելով նրանց իր գոյութեան անհրաժեշտ և էական պայմաններ։ Դրա փոխարէն, հայը, ի նշան երախտագիտութեան, ամենայն հաւատարմութեամբ ծառայեց Ռուսաստանին, չը խնայելով թափել և իր գաւառների արիւնը, իբրեւ իր սեփական հայրենիքի համար։

Այդպէս շարունակվեց մինչև անցեալ դարի ութնասական թուականները, երբ կովկասեան նոր վարչութիւնը սկսեց գաւառները ուսուց պետութեան աւանդական քաղաքականութեան հայերի վերաբերմամբ և սկսեց խեղճ աչքով նայել նրանց անտեսական և կուլտուրական զարգացման վրա ու վտանգ նկատել Ռուսաստանի համար այդ խաղաղ կուլտուրական զարգացման մէջ։ Այդ հայերի համար փաստաւոր և նոյն իսկ պետական շահերին անհամապատասխան քաղաքականութիւնը, որ ըսկողովք Դոնդուկով-Կօրսակովի կառավարչապետութեամբ, սաստկանալով հետզհետէ, որչափ աճում և սաստկանում էր Ռուսաստանում Ալեքսանդր Ա կայսրի օրով հաստատված բնակչիօնական և խաւարամիտ բնութիւնը, հասաւ իր գագաթնակէտին իշխան Գոլիցինի օրով, որ, մոռանալով ամեն չափ ու սահման, հրատարակեց հայերին օրէնքից գուրա։

Այդ քանակահարկաւ շրջանում հայ ազգը Ռուսաստանում սարսափելի զրկանքների ենթարկվեց, ձեռք բարձրացվեց նրա ազգայնական գոյութեան, հոգեւոր-մտաւոր-բարոյական անկախութեան և նրա ազգային-ժողովրդական եկեղեցու վրա։ Մի աշխատասէր, ժրաշատ, կուլտուրային ընդունակ ամբողջ տարրի առաջ, ի փաս երկրի, փակվեց ազատ, խաղաղ կուլտուրայի ճանապարհը։ Հետզհետէ փակվեցին նրա գաղութները, բարեկրթական և լուսաւորական հաստատութիւնները, կապովեցին հայ եկեղեցու իրաւունքները, խլկեցին նրա գոյքերը, և ի լրումն ամենայնի, երկրի մի ֆանատիկոս և տգէտ ու հակա-կուլտուրական տարրը, թուրք-մօնղոլ տարրը սրելով, յարձակել տուին այդ թշուառ ժողովրդի վրա, ենթարկելով նրան կոտորածի, թալանի, սրի և հրի, քայքայելով նրան անտեսապէս, ֆիզիկական, ի լրումն բարոյական կործանման։

Միաժամանակ, Ռուսաստանում հայերի դէմ հաւածանք յարուցանելու հետ զուգահեռաբար, այդ 25-ամեայ ընթացքում, թիւրքիայի հայերի գրութիւնը ևս վատթարացաւ օրէցօր և փոխանակ այն բնութիւնների, որ Ալեքսանդր Ա կայսրի նախաձեռնութեամբ, Բերլինի կօնգրէսի կողմից խոստացված էին հայերին, ներանք ենթարկվեցին սխառեմտիկ շարժերի, կոտորածների և ջնջման, դարձաւ շուրջիս այն անգութ, չարագործ քաղաքականութեան, որ մշակեց ուսուց բնակչիօնական բնութիւնը։

Լօբանովի միջնորդութեան օրով, գնելով իրեն նշանաւոր «Հայաստանը առանց հայերի»։ Այդ քաղաքականութիւնը, որ միանգամայն հակառակ էր նախկինին և գաւառներում էր ուսուց ազատարար Եւպոսիայի լաւագոյն իրէպներին, ամբողջ ուսուցական պատմութեան ոգուն և ուղղութեան, շարունակվում է և դեռ այժմ։ Ի հարկէ Լօբանովիները չը ստացան Հայաստանը, այլ նա ընկաւ աւելի շուտ Գերմանիայի ձեռքը, բայց հայերը ջնջվեցին և այսօր նրանց գրութիւնը թիւրքիայում գծախայն է և աննկարագրելի և այդ, գլխաւորապէս ուսուցական վերջին քաղաքականութեան շնորհիւ։

Նոյն իսկ Պարսկաստանում ուսուց գիպլոմատիան թշնամական դիրք ըռնեց հայերի դէմ, աշխատելով խլել հայերի ձեռքից անտեսական և առտարական զարգացման ասպարէզը և վարկարեկ անել նրանց պարսից կառավարութեան առաջ։

Կուրացած իր ատելութեամբ առ հայերը, ուսուցական նախկին բնութիւն աչքից բաց թողեց, չը նկատեց մի մեծ վտանգ, որ ամբողջ տարրերնով կազմակերպվում էր նրա առաջ, վրտանգ որ սպառնում է ոչ միայն հայութեան, այլ և Ռուսաստանին և ամբողջ քաղաքակրթութեան. դա պանիսլամական կամ պանթիւրքական պրօպագանդան է, որ ձգտում է միացնել Ռուսաստանի, Պարսկաստանի և թիւրքիայի մուսուլման բոլոր ցեղերը և ազգերը Արդու Համդի պէս կարմիր գազանի գայիսօնի ներքոյ։

Անա այդ վտանգի մէջ էր ամբողջ հայութիւնը, երբ Ռուսաստանում խփվեց ազատարար շարժման առաջին հնչակը։

Շահրիար

(Կը շարունակվի)

ԲԱՐԻ ՃԱՆԱԳԱՐՉ

Նա գնում է, ծեր ու գառամեղ, յոգնած երկար ու ձիգ տարիների անթիւ գործերից։

Ծանր է նրա խիղճը։ Հակայական է նրա խղճի վրա ծանրացած բեռը։

Այժմ երբ նա մեկնում է, երբ նրա կարծօրեայ ուղին տանում է ուղղակի դէպի գերեզման, ցցվում են նրա առաջ իր երկարամեայ պետական գործունէութեան բոլոր ֆազիսները։

Եւ նրա խիղճը տնքում, հառաչում է իր վրա եղած բեռի ծանրութեան տակ։

Չորս կայսր է նա տեսել և չորսի օրով էլ նա միշտ ամենազօր ու ազդեցիկ է եղել։

Դորում էր նրանից Մայր-Ռուսաստանը, ստեղծ էին հրէաները, հայերը, լեհերը, վրացիները։ Ծայրագաւառները Բեհեզդերովից աւելի նուազ էին վախճանում քան նրա անունից։

Այժմ նա գնում է յոգնած ու փշրված, յաղթանալով նոր ու թարմ հոսանքներից։

Ծերունի, դու քանդեցիր նաև հայերի տունը։ Բայց անկման այս օրերին մենք անյիշաչար ենք։ Ձե՛ որ հալի դարեւոր յատկութիւնն է եղել «Բարի արեք ձեր ատելիներին»։ Եթէ այդպէս չը լինէր հայը, եթէ նա թուրքի ու քիւրդի նման «աչքի տեղ աչքը հանէր, ատամի տեղ ատամը», եթէ նա Նազովբեցու բարձր ու գծուարին գաղափարի պոչից չը կաշէր, այլ Մովսէսի դիւրեմբունի «աւին ընդ ակնը» գործադրէր—թերեւս այսօր հայն էլ մի մեծութիւն համարվէր, թեր ևս նրան այսօր չը համարէին մի աւիամարեղի փառալուսի։

Այն, ծերունի, մենք անյիշաչար ենք, և քեզ ասում ենք այս վերջին վարկանքներին։

«Բարի ճանապարհ»։

Երբ նա իջնում էր Պետերբուրգի Սինօգի մարմարէ մեծ սանդուղքներով, նրա աջ ու ձախ կողմում, միջանցքի պատերի տակ ու սանդուղքների վրա շարքով կանգնած էին լինում եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և հազարաւոր ուրիշ «աղբսողներ»։

Եւ նա անցնում էր այդ երկու շարք մարդկային պատի միջով, տառնջ աջ ու ձախ նախելու, առանց նրանց խոնարհ, մինչև գետին ողջոյններին պատասխանելու, միայն «Господи помилуй» բարձրաձայն աղաղակելով։

Մուգօրիներ, իշխան Մեշչերսկիներ ու Գրինգուսներ աչքերը յառած հայում էին նրա մի մատի շարժումին, ինչպէս հլու ըստրուկ իր տիրել մարակին։ Պէվէներ, Գօլիցիներ, Բօբրիկօֆներ, Դեկանոսֆներ առանց նրա խորհրդի ու հրամանի ոչ մի սե գործի չէին ձեռնարկում։

Ճնշում, հալածանք, գաղանական միջոցներով ուսուցում, կրթական գործի ներկայ խայտառակ վիճակը, կարճ—Ռուսաստանի բոլոր խաւար գործերը, բոլոր խաւարամիտ ուղղութիւնները, բոլոր բարբարոսական հաւածանքները գտնում էին նրա հօր պաշտպանութիւնը։ Այդ էլ քիչ է։ Նա էր սկիզբն ու վախճանը ծայրագաւառների դանձալին քաղաքականութեան։

Սև ոյժերի հայրն էր նա, խաւարամիտ ու բռնակալ բոլոր խոշոր ծրագիրների ծնող-մայրը։

Երբ այսօր նա գնում է, երբ մի ոտն արդէն գերեզմանումն է, մենք նրան «Բարի ճանապարհ» ենք մաղթում։

Այն, «Բարի ճանապարհ»։ Ռուսաստանի բոլոր օտարախոս հպատակները չափազանց շատ են տանջվել քո ձեռքով, և նրանք բոլորն էլ ամբողջ սրտով ասում են։

Բարի ճանապարհ, շուտով հեռացիր. Աստծու ստեղծած աշխարհը դրախտ էր, իսկ դու և քեզ նմանները գծողը դարձրեց նրան։

Նոր հոսանքները գլուխ են բարձրացրել, նոր գաղափարները կամաց-կամաց յաղթանակ են տանում։

Բայց ծերունին, ուսուց սինօգի օրեր-պրօկուրօր Պօրեգօնօսեցիկը, կնքելով և գերեզման գնելով իր քաղաքական ու պաշտօնական կեանքը, իր ետևից թողնում է լեզիօններով «ճէտեր», աշակերտներ ու հետևորդներ։

Դա ներկայ բիւրօկրատիան է։

Նոր գաղափարների վերջնական յաղթանակը վերջնական մահ է այդ փչացած բիւրօկրատիայի համար։

Եւ նա իջնում է նորի դէմ։

Նորը դեռ թարմ է, դեռ մատաղ. նրա «ուսկըր դեռ չէ պնդել», նա դեռ փխրուն է։ Իսկ հնի արմատները դարեւոր ու չափազանց գորեղ են։

Որքան էլ նորն անբաւարար է, որքան էլ որ նա դեռ քաղաքական ազատութեան թութովանքն է կազմում, բայց և այնպէս բոլոր առաջադէմ տարրերը պէտք է պաշտպանեն այդ նորը, այդ թութովանքը։

Արմատականը, քննադատելով այդ նորը, ցոյց տալով նրա անթիւ պակասութիւնները, գնելով իր նոյն իսկ ծայրայեղ պահանջները—պէտք է իր արիւնով պաշտպան կանգնի նորին։

Ով միայն դրանով է բաւականանում, նա հասարակ լրերալ է։ Բայց եթէ մի արմատական դէմ է գնում նորին՝ նրան կործանելու մտքով, նա գառնում է գործիք բնակցիայի ձեռքին, Պօրեգօնօսեցիկ յետնորդների, նրա ճէտերի համար։

Նոր, թարմ արմատական ուժեր. համախմբվեցէ, խտացրէք ձեր շարքերը, բնակցիան գորսնում է։ Պօրեգօնօսեցիկ էժան գնով չէ ուզում վերջակէտ գնել իր պաշտօնական կեանքին։

Ստացրէք ձեր շարքերը. պաշտպանեցէք նորը և առաջ անցէք նրանից հակայական քայլերով։

Իսկ մենադին—բարի ճանապարհ։

Սաժակ

ԲԱԳՈՒԻ ԱԶԳԱՐԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Այդ վերնագրով հետեւալ թուցիկն է յայտարարել Հ. Յ. Դաշնակցութեան Բագուի Կ. կօմիտէտը։

«Պատարի գործիչների և հասարակութեան տակաւրի զարեկի պրօօկայեան շարունակում է ազատօրէն տարածվել, առաջ բերելով հասարակութեան մէջ ամենայնիմար և անմիտ լուրեր։ ЧЕРНАЯ СОТЯ—ների և ոստիկանական ագենտների եռանդուն աշակցութեամբ՝ այդ լուրերը աւելի և աւելի մեծանալով փոխվում են սարսափի. հասարակութիւնը այդպիսով գանձվում է մշտական յուզման, վախի և սուսկումի մէջ, չը գիտենալով թէ ինչ պատահարներ կը բերէ նրանց գլխին վաղվայ օրը։

Այժմ քաղաքում լուր է տարածված, որ հայերը մտադիր են յարձակում գործել թուրքերի վրա մի կողմից և զօրքերի վրա միւս կողմից։

Այդ լուրերը անկասկած հասնում են իրանց հպատակին, առաջ բերելով թուրքերի մէջ համապատասխան յուզված գրութիւն։

Նոյնախի տրամադրութիւն ստեղծվում է հայերի մէջ այն լուրերի շնորհիւ, որ թուրքերը մտադիր են յարձակվելու հայերի վրա, և այդ լուրը հաստատուելու նպատակով մէջ են բերում այն, որ իբրեւ թէ վերջին ժամանակներս գիւղերից մեծ բազմութեամբ եկած թուրքեր են երևում քաղաքում։

նում են տարեկան 12,000 ռուբլի, իսկ Սենսա-
տորները 7,000 ռ.: Սակայն կան և բաւական
խոշոր բացառութիւններ. այսպէս—հանգուցիակ
Դրագոմիրօֆը ստանում էր տարեկան 43,120
ռուբլի, պետական խորհրդի անդամ արտիլլե-
րիայի գեներալ Կոխանովը—21,000 ռ., գեներալ
ադիւտանտ Շուկալովը—20,000 ռ., գեներալ
Բա-
րոն Տաուրէն—20,500 ռ.: Անա հակայական
ոռնակներ:

Օգէստայից «Իվերիա» լրագրին հետագրում են.
«Մի քանի օֆիցէրներ յայտնում են, որ իրան-
ցից անկախ պատճառներով նրանք չէին կա-
րողանում խուլիգանների թաղանի առաջն
առնել և նրանցից ով որ բողոքեց դրա գէմ,
կախաւորվեց: Համալսարանը ժընէվի կօն-
ֆէրենցիային յայտնում է, որ ուստիականու-
թիւնը և զօրքերը կրակում էին կարմիր խաչ
ունեցող բժիշկների վրա: Ժողովուրդը սպա-
սում է Հէյդզարդի դատի ենթարկվելուն: Բո-
լոր սպանված ուսանողներին թաղում են մի
ընդհանուր գերեզմանի մէջ:

Իրաւաբանների ասուով Թիֆլիսից գիւն-
րական գրութիւնը և ուժեղացրած պաշտպա-
նութիւնը վերացնելուց յետոյ՝ ինքն ըստ ին-
քեան կորցնում են իրանց ոյժը այդ պատ-
ճառով հրատարակված բոլոր պարտադիր կար-
գադրութիւնները. դրանց մէջ է դոնաւան-
ների մասին եղած կարգադրութիւնը, տան
հեղոք-գնացողների մասին տեղեկութիւնները,
գէնը ծախելու, պահելու և վրան կրելու մա-
սին եղած կարգադրութիւնները և այլն:

Հոկտեմբերի 30-ին հրաման էր արված I
գիմնադիւլում եղած զօրքերին դատարկել
գիմնադիւլում և հետնաւոր: Բայց որովհետեւ Ձի-
թիսիանների նախկին գործարանի շինու-
թիւնը, ուր պէտք է գետնադիւլ, դեռ պատ-
րաստ չէ, գիմնադիւլի իշխանութիւնը խընդ-
րել է գիմնադիւլի վարչութիւնից մի քանի
օր ևս սպասել, սակայն գիմնադիւլի վար-
չութիւնը վճարար մերժել է այդ խնդիրը:
Ասում են, որ 15,000 ռ. պէտք է ծախսել
գիմնադիւլում գնդակների, զօրքերի և խու-
լիգանների կատարած աւերածութիւնների
վանդալական հետքերը մաքրելու համար:

Չիւնորական դատարանը Թիֆլիսում Աւագ
Արուշանօֆին դատաւարարել էր մահւան
պատժի սեպտեմբերի 25-ին Օրբանճալայի ճա-
նապարհին ուռած նետելու առիթով: Նրա
այդ պատժը փոխարինված է 12 տարվայ
տաժանակիր աշխատանքով:

«Իվերիա» լրագիրը լսել է, որ «պատրի-
տական» կուսակցութեանը մի քանի անդամներ
յայտնել են սօցիալ-դեմօկրատիական բան-
ւորներին, թէ ուզում են սրանից յետոյ
բարեկամանալ և միանալ նրանց հետ: Բան-
ւորները տուել են իրանց հաւանութիւնը,
սակայն ասել են, որ կուսակցական մի
քանի պաղտնիքներ չէ կարելի ասել նրանց:

Բիծնից հեռագրում են հոկտեմբերի 30-ին.
«Այսօր ստացվեցին գործադուլից յետոյ առա-
ջին լրագրերը: Սկսվել են միայն ցերեկվայ
գնացքներ: Ամեն տեղ տրամադրութիւնը
բարձր է: Սպանվածների թիւի մասին տեղե-
կութիւնները տարբեր են: Գուրիայում կոխ-
շարժականում է: Բուխարայի նահանգը պատե-
րագական վիճակի մէջ գնելն ընդհանուր
գեղեցիկութիւն է առաջ բերել» (Դ. Ա.)

Տօմսկից հեռագրում են Դ. Ա.-ին հոկտեմ-
բերի 29-ին. «Իբր լրացում հաղորդում եմ, որ
ուսանողական-հրեական կոտորածների և թա-
լանի ժամանակ սպանված է, բայց ուսանող
Ալեքսանդր Գուլիշաւարովից և Արամ Մա-
նանշեանից, նաև և ուսանող Ալեքսանդր Բա-
խտարեանցը»:

Մայրաքաղաքի լրագրերն են հաղորդում են,
որ Հեռուստ Արևելքի նախկին փոխարքայ
Ալեքսեյով մտադիր է հարաւային Ֆրանսիա-
յում գնել մի կալուած և ընդմիջում բնակու-
թիւն հաստատել այնտեղ:

Օֆիցերներին մի խումբ դրաւոր խնդրով
գիմնել է Պետերբուրգի Իրաւաբանական դաշ-
նակցութեանը և խնդրել, որ մի բանիմաց ի-
րաւաբան ուղարկվի օֆիցերների ընկերու-
թիւնը՝ մշակելու օֆիցերական դաշնակցու-

թեան կանօնադրութիւնը և օգնելու օֆիցեր-
ներին այդ գործը գլուխ բերելու: («ՀՈՅ.»)

Պետերբուրգի պրաւաւաւանի հոգեւորականու-
թիւնն այս օրերս յոյս ունի ստանալու Կալ-
սերական Տան համար նոր գրված աղօթքը,
որը յարմարեցված պէտք է լինի հոկտ. 17-ի
մանիֆէստի նոր առաջացրած պայմաններին:

«Рус. Вѣд.» լրագիրը, որ յայտնի է իր ծալ-
րայից գաւաւորութիւնով, հաղորդում է հե-
տեւեւ. «Մի լուրջ աղբիւրից մեր ստացած
տեղեկութեան համաձայն՝ Պետական Գումայի
ընտրութիւններին վերաբերող ծրագրերը,
որ մինչև այժմ քննութեան առարկայ էին և
որոնք պահանջում էին ընտրութիւնների ընդ-
լայնում,—մերժված են բոլորն էլ: Պետական
առաջին Գուման իսկ, ամենայն հանութեամբ,
կը կոչվի ընդհանուր ձայնաւորութեան հիման
վրա»:

Հոկտ. 18-ի գիշերը «С. От.» լրագրի տպա-
րանում խիստ խուզարկութիւն է կատարվել
3 ժամ շարունակ և կազմվել է հետեւեւ ար-
ձանագրութիւնը. «Տեղեկութիւն ստանալով, որ
«С. От.» լրագրի տպարանում հոկտ. 18-ին
տպվել են թուղթիկներ ակներե յեղափոխա-
կան բնաւորութեամբ, գեներալ-հաւանագետը հրա-
մայեց խուզարկել յիշված լրագրի տպարանը:
Գտնվեց 3 համար «Изв. Совѣта Рабочихъ Де-
путатовъ» լրագրի № 2-ից, մի համար «Рево-
люціонная Россія» լրագրի և նոյն լրագրից
կտրոններ»:

Որովհետեւ Պետերբուրգում լուրեր են տա-
րածվել, որ «սե հարիւրեակը» պէտք է կոտո-
րած սարքէ ինտելիգենցիայի և հրէաների
դէմ, բանւորական խորհուրդը կայացրել է
հետեւեւ վճիռը. «Ամբողջ Ռուսաստանում սե
հարիւրեակի գնդերի կատարած հրէական ա-
ւերածութիւնը և բանւորների ու ինտելիգեն-
տների կոտորածները, գաղաւթի ու յայտնի ու-
ստիկանութեան օժանդակութեամբ, հանդիսա-
նում է կուր մի նոր ձև հասարակական այն
խմբերի դէմ, որոնք Ռուսաստանի համար
կուսով ազատութիւն ձեռք բերին: Այդ պատ-
ճառով բանւորների պատգամաւորական խոր-
հուրդը վճեց յայտարարել, որ ուսուան
պրօֆեսորատը կը կուր իր ձեռքում եղած
բոլոր միջոցներով սե-հարիւրեակի դէմ՝ որն
ուզում է սպանութեան, բռնութեան և կոռու-
պտիւն միջոցով կանգնեցնելու ազատութեան
մեծ և յաղթական գնացքը»:

(P. B.)

ՄԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԲԵՐ

—Պարսկաստանը Թիւրքիայի դէմ,
—Երևու մահմեդական հարեան երկրի յարա-
բերութիւնը խիստ լարվել են այս օրերս, և
գուցէ լուրջ վտանգ է սպառնում յարաբերու-
թիւնների բոլորովին խզման: «Հայաթ» լրա-
գրի Ուրմիայից ստացած մի հեռագրի համա-
ձայն, օսմանցի քրդերը և զօրքերը անցել են
պարսկական սահմանից և հասել են մինչև Սօ-
ուդ-Բուլաղ: Պարսիկ կառավարութիւնը խիստ
նկատողութիւն է արել սուլթանի կառավարու-
թեան այդ դէպքի առիթով: Բ. Գուրը պա-
տախանել է, որ պարսկական սահմանապահ
այդ բռնաբարութիւնը եղել է առանց իր ցանկու-
թեան և գիտութեան, բայց այնուամենայնիւ,
ինչպէս հազորդում է թուրք թերթը՝ երկու
պետութիւնները զօրք են կենտրոնացնում
սահմանագլխի վրա: Այս մտով հարցը իհարկէ
շուտով կը պարզվի:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅՅ

31 հոկտեմբերի

Սեպտեմբերի 30 հոկտ.: Քաղաքը հանգիստ
է: Երէկ գիշեր ոստիկանապետը խուզարկու-
թիւն կատարեց: Բռնված են բազմաթիւ խու-
լիգաններ, որոնցից 50-ից ակելին արքայի-
ցին քաղաքից:

ԲԻԳԱ: Հայկառակ տարածված լուրերի թէ
անկարգութիւններ են պատրաստվում, երէկ-
վան օրը հանգիստ անցաւ: Պօլիտխիական
ինստիտուտի գրեթե յայտարարութիւն է
կալված պրօֆէսոր Վալդէնի ստորագրու-
թեամբ, թէ ուսումնարանական կօմիտէի
կարգադրութեամբ հոկտեմբերի 29-ից ինստի-
տուտը փակվում է անորոշ ժամանակով:

ՊԱՐԻՉ, 30 հոկտ.: «Ժուրնալ» լրագիրը կո-
պիտ սխալ է անուանում ուսուան պատմաւոր

կուսակցութեան ընթացքը, որ մերժում է կա-
ռավարութեանը իր աջակցութիւնը յուզմունք-
ները գաղափարեցնելու և ըէֆօրմիսը իրագոր-
ծելու համար: Վիտտէն անկեղծութեան բաւա-
կան ապացոյցներ տուեց ազատամիտներին, և
անհասանկան է, որ բոլոր տարածայնու-
թիւնների պատճառը ընդհանուր ընտրողական
իրաւունքի հարցը լինել, որովհետեւ ուսա-
կան ազատամիտները գիտեն, որ այդ իրա-
ւունքը գոյութիւն չունի մինչև անգամ ակելի
կալուստրական երկիրներում, քան Ռուսաս-
տանն է, այն է Անգլիայում, Պրուսիայում,
Աւստրիայում, Շվեյցարիայում, Նորվեգիայում,
Ունգարիայում: Ազատամիտների ընթացքի
միակ բացատրութիւնն այն է, որ նրանք են-
թարկված են սօցիալիստներին: Այդպիսի
գրութիւնը վտանգաւոր է հէնց իրան ազա-
տամիտ կուսակցութեան համար: Մինիստրե-
րի խորհրդում վճռվեց, որ էտիէն կը ստան-
նէ գիւնւորական մինիստրի պօրտֆէլը, Գիւ-
րեօֆ—ներքին գործերի մինիստրի, Տրուլէ—
առեւտրի մինիստրի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 հոկտեմբերի: Անուանա-
կան ուկազով հոկտեմբերի 30-ից Գուրնօֆ-
նաւակված է Պետական խորհրդի անգամ
յանձնելով նրան ներքին գործերի մինիստրու-
թեան վարչութիւնը: Չարգարացան այն լու-
րերը, որ այսօր չարդ էր տեղի ունենալու
Տվէրում և Կիւլում: Օրը հանգիստ անցաւ:

ԿՐՕՆԵՏՄԻՏ, 30 հոկտեմբերի: Քաղաքը հան-
գիստ է: Պաշտպանութեան համար եկած զօր-
քերը մնում են Կրօնշտադտում:

ՄՕՍԿՎԱ, 30 հոկտեմբերի: Համառուական
երկաթուղիական դաշնակցութեան կենտրոնա-
կան բերան խնդրում է կտրականապէս հեր-
քել այն լուրը, որ իբր թէ մտադրութիւն կայ
երկաթուղիների գործադուլ անել: Մանկավար-
ժական ընկերութիւնը, որը ազմինիստացիայի
կարգադրութեամբ վերջ էր տուել իր գործու-
նէութեանը, վերսկսեց իր գործունէութիւնը,
հոկտեմբերի 17-ի մասիֆէստի հիման վրա:

ԲԵՐԼԻՆ, 30 հոկտեմբերի: «Նորդհոյզ»
նկատում է, որ նոր Ռուսաստան ստիզմոնի-
րին վիճակվում է յաղթել անյսկի դժուարու-
թիւնների թէ պահպանողական և թէ արմա-
տական ուսուպիստների կողմից: Այդ պատճա-
ռով ուսուան կառավարութեան մինչև այժմ
հրատարակած ակտերը երախտագրութեան
են արժանի, որովհետեւ ցոյց են տալիս ան-
կեղծ ցանկութիւն խղել կապերը անցեալի հետ
և իրագործել ուսուան պետական օրգանիզմի
լիակատար նորոգութիւնը: Գիտար խնդիրների
լուծումը այնքան ակելի շուտ տեղի կունենայ,
որքան ակելի շուտ կառավարութիւնը, մտցնե-
լով Ռուսաստանը ժամանակակից սահմանա-
դրական պետութիւնների շարքը, աջակցու-
թեան կը հանդիպէ անկեղծ ցանկութիւններով
տոգորված խոհմ շրջանների կողմից: Վերջին-
ների օգնութեամբ կաշնդրվի վերականգնել հա-
նարակական կարգը:

ՊԱՐԻՉ, 30 հոկտեմբերի: «Մատեն» լրա-
գիրը ի նկատի ունենալով շարունակվող յուզ-
մունքները Ռուսաստանում և ըէակցիայի
վտանգը, ցատակցութիւն է յայտնում այն
առիթով, որ ազատամիտ կուսակցութիւնը
աջակցութիւն չէ ցոյց տալիս կառավարու-
թեանը, թէկուզ մինչև Պետական Գումայի
հրաւիրելը:

ՄՕՍԿՎԱ, 30 հոկտեմբերի: Այն տու լուրերի
պատճառով, թէ Մօսկվայում տեղի ունեն
անկարգութիւններ, շատերը ուղեւորվում են
արտասահման և Ֆինլանդիա: Ուղեւորվեցին
շատ հրէաներ և օտարազգատակներ: Այսօր
Մօսկվայի գանաղան տեղերում կայացան մի-
տիններ, գլխաւորապէս բանւորների, որոնք
կատարեալ կարգապահութեամբ անցան: Որո-
շումները վերաբերում էին անտեսական պա-
հանջներին:

31 հոկտեմբերի

ԼՕՄԺԱ, 30 հոկտ.: Հոկտեմբերի 17-ի մա-
նիֆէստի առիթով լեհացիների բնակարան-
ները առաւօտվանից զարդարված են կանաչ-
ներով և ազատութեան ազգային էմբլէմանե-
րով: Տաճարում մաղթանք կատարելուց յետոյ՝
լեհ նացիօնալիստները, նահանգապետի թոյլ-
աւութեամբ, հանդիսաւոր թափօր կատարե-
ցին խաչվածներով: Ծառեր էին խօսում Լեհա-
ստանի ինքնավարութիւնը ձեռք բերելու մասին
խաղաղ և օրինական ուղիով: Թափօր վերջացաւ
օրինակելի կարգապահութեամբ:

ԲԵՆԼՕՍԿ, 30 հոկտ.: Աւերածի ու թալանի
երկրւոյի գուր է: Ձեռք առնված եռանդուն
միջոցների շարժումը՝ օրը խաղաղ անցաւ: Աղ-
գարնակութիւնը խաղաղվեց:

ԿԱԼԻՇ, 30 հոկտ.: Նահանգապետը յայտա-
րարեց պատերազմական վիճակի կանօնները,
որոնց խանգարողը կենթարկվի մինչև 3 ամիս
բանտարկութեան և մինչև 3,000 ռ. տուգանքի:
Միաժամանակ հրատարակված է և հոկտ. 17-ի
մանիֆէստի բացատրութիւնը, որով պատե-
րագական գրութիւնը համարվում է ժամա-
նակաւոր միջոց, որի նպատակն է ընդհանուր
անվտանգութիւնը վերականգնել և որը քիչ է
նեղում խաղաղ բնակիչներին:

ԵԼԻՍԱՎԵՏԳՐԱԴ, 30 հոկտ.: Երեկոյան
ժամը 6-ից յետոյ աներից դուրս գալն արգելող
որոշումը փոխված է, միայն սպանալիքով, որ
եթէ խաղաղութիւնը խանգարվի, նորից կը
վերահաստատվի այդ օրէնքը:

ԼՕՆԴՕՆ, 30 հոկտ.: Ռուսաստանի և Անգ-
լիայի փոխադարձ համաձայնութիւն կատարե-
լու առիթով «Իպլի Մէյլ» լրագիրն ասում է,
որ երկու պետութիւնների մէջ առաջին դժուա-
րութիւնը ծագում է Պարսկաստանում Բրիտա-
նական շահերից: Անգլիան չէ կարող առանց
անհանգստութեան դիտել մի ուրիշ պետու-
թեան Պարսիկ ծոցում յենակէտեր ձեռք բե-
րելը: Անգլիայի անգլիական դիրքը պատերազ-
մական անհրաժեշտութեան արդիւնք է: Երկ-
րորդ դժուարութիւնը կապված է Կ. Պօլսի
հարցի հետ, որի վերաբերմամբ շահ ունեն և
Աւստրիան ու Գերմանիան:

ՏՕԿԻՕ, 30 հոկտ.: Ամերիկական ներկայա-
ցուցիչը այժմ դեպքան է դարձված: Եւպոնա-
կան էսկադրան ծովապետ Տօգօի առաջնորդու-
թեամբ կայացրել Անգլիա մարտի կէսերին:

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ, 31 հոկտ.: Սահմանադրա-
կանների այստեղի խումբը Մօսկվա Գօլովի-
նին հետեւալ հեռագիրն է ուղարկել. «Վրաս-
տեան քան համաձայնագրական-դեմօկրատիկան
խումբի ընդհանուր ժողովը, ընդունելով, որ
կառավարութիւնը, Վիտտէի ղեկավարութիւ-
նով, երաշխաւորում է բարեկոտորութեան օրի-
նական իրագործումը, որ աւետված են հոկտ.
17-ի մանիֆէստով՝ անհրաժեշտ է համարում
կոմս Վիտտէի կառավարութեանը այդ ուղ-
ղութեամբ ցոյց տալ լիակատար օժանդակու-
թիւն»:

ԲԻԳԱ, 31 հոկտ.: Երէկ խաղաղութիւնը չը
խանգարվեց: Անկարգութեան դոհերի թաղումը
խաղաղ անցաւ:

ՔՈՒԹԱՅԻՍ, 30 հոկտ.: Երկաթուղին նորից
գործադուլ արեց:

ՊԷԿԻՆ, 31 հոկտ.: Հանկուտի երկաթուղին
այս օր բացվում է կանօնաւորապէս:

ՎԻԵՆԱ, 31 հոկտ.: Կոմս Ապօնին և միւս
պատգամաւորները կայարան եկան անկախ-
ների կուսակցութեան միտինգի առիթով: Վէնգ-
րիացի հիւրերը մեկնեցին գիւնորների պաշտ-
պանութեան տակ, որովհետեւ տեղի ունեցաւ
ընդհանրում անկախների և սօցիալիստների
միջև: Համակրողներն սկսեցին ողջունել, իսկ
հակառակորդները քարեր շարժել: Միտինգի
ժամանակ ընդհանրում եղաւ:

ՎԻԼՏՊՈՐԿ, 31 հոկտ.: Սպանական թագա-
ւորը մեկնեց Վիեննա: Վիեննայ Կայսրը և բո-
լոր պրինցներն ուղեկցեցին նրան մինչև կայա-
րան: Հրաժեշտը շատ սրտազին էր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 հոկտ.: Արդարադատու-
թեան մինիստրութեան մէջ ներկայումս ե-
ռանդուն կերպով մշակվում է կանօնադրու-
թիւն անձի անձեռնմխելութեան, դաշնակցու-
թիւնների և ժողովների ազատութեան հարցը:

Մօտակայ ապագայում այդ օրէնքների մշա-
կումը կը վերջացվի:

ՍԱՐԱՏՕԼ, 31 հոկտ.: Քաղաքը ընդունեց իր
առօրեայ կերպարանքը, պահանջները վերաց-
ված են: Գաւառներից լուրեր են ստացվում
այնտեղի խաղաղութեան մասին:

ԼՕՆԴՕՆ, 31 հոկտ.: «Իւլլի Տէլեգրաֆ»-ը
ասում է, որ կոմս Վիտտէն արժանի է լիա-
կատար հաւատի, նրա կողմնակիցը գործնական
մարդիկ են, որոնք իրանց կողմից պէտք է
վայելեն ուսու ժողովրդի համակրանքը: Ծայո-
նի է, որ ուսու ազատամիտները ընդունում են
բրիտանական սահմանադրութիւնը իբրեւ օրի-
նակելի սահմանադրութիւն: Բայց եթէ ին-
տելլիգենտ Ռուսաստանը ցանկանում է հաս-
նել բրիտանական սահմանադրութեան ազա-
տութեանը, նա պէտք է իր ամբողջ ոյժերը
դնէ պետութեան տրամադրութեան տակ:
Կառավարութիւնը անկարող է իր վրա վերց-
նել անագին պետութեան վերափոխման գոր-
ծը: Եթէ ուսու ինտելլիգենցիան հաւատ չըն-
ծայէր նոր ըէժմը կարող է խորտակ-
վել նոյնպէս, ինչպէս խորտակվեց հինը:
Երկրորդ ելքը կայանում է գիւնւորա-
կան գիկտատուրայի մէջ, բայց այդ բանի

